ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ- 0080-21

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Տիգրան Հակոբյան***
Ք. Երևան, Այվազովսկու փող. 19

Գործունեությունը՝ ***Երեբունի վարչական շրջանի Նուբարաշենի 2/4 հասցեում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշումային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0080

«22» 04 2021թ.

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի 2/4 հասցեում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշումային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	Տիգրան Հակոբյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը ՝	Գ կատեգորիա
Տեղարման վայրը՝	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան

Քաղաքացի Տիգրան Հակոբյանի կողմից Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի 2/4 հասցեում նախատեսվում է կառուցել բնական գազի լիցքավորման ճնշումային լցակայան:

Համաձայն նախնական գնահատման հայտի և աշխատանքային նախագծերի՝ նախատեսվող գազալցակայանը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.7հա ընդհանուր մակերեսով տարածքում՝ Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայանի շահագործման համար կառուցել մեքենայական մասնաշենք. վարչական և հասարակական սպասարկման նշանակության մասնաշենքեր, որոնք ներառում են սպասասրահը, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման սրճարան, առևտրի սրահ և այլն, ինչպես նաև օպերատորական սենյակ: Ավտոմեքենաների գազալցման ճնշակայանը մեկուսացված է հարակից շենքերից և շինություններից գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ * РА ГОСУДАРСТВЕННОЕ НЕКОММЕРЧЕСКОЕ ОБЩЕСТВЕННОЕ ОБЪЕДИНЕНИЕ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ "ЕРЕВАН" * RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO

02543163

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ

COMMISSION OF EXPERTS

Համաձայն հայտի նախատեսվող գործունեության տարածքում և մերձակայքում պատմամշակութային, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող տարածքներ չկան, ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Բոլոր նոր մասնաշենքերի կառուցումն իրականացվելու է ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և լցասյուների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Գազալցակետերի հեռավորությունը ճանապարհից նախատեսված է 15 մետրից ոչ պակաս: Գազալցակայանի հեռավորությունը բնակելի և արտադրական շինություններից ընդունված է ըստ գործող նորմերի:

Գազի արտադրատեխնոլոգիական շինությունների հեռավորությունը օպերատորային շինությունից ընդունված է 9 մ-ից ոչ պակաս: Գազալցակետերի հեռավորությունը գազակուտակիչ ստորգետնյա բունկերից և կոմպրեսորային մոդուլից նախատեսված է ըստ գործող նորմերի:

Նախատեսվող գործունությունն ապահովելու համար առկա են հետևյալ չափորոշիչները՝

Կառուցապատման ընդհանուր մակերեսը - 6978քմ

Շենքերի շինությունների զբաղեցրած տարածքը - 585.0քմ

Տարածքի ասֆալտապատ մակերեսը - 3435.0քմ

Կանաչապատ տարածքի մակերեսը -2958.0քմ, որը կազմում -42.4 տոկոս:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Ոռոգումը կիրականացվի Երևան քաղաքի ոռոգման ցանցից պայմանագրային հիմունքներով: Ջրի պահանջվող տարածքում նախատեսվում է խոտի ցանքս, ցանկապատի մոտ հատվածներում կտնկվեն ծառեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ և ետլիցք՝ 115 խմ:

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տարածքի հարթեցման համար:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանան շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 12խմ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կատարվելու է հատուկ նախատեսված ավտոմեքենաներով պայմանագրային հիմունքներով: Տարածքում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումը և ջրահեռացում իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կմշակվի

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

նախագիծ: Ջուրն օգտագործվելու է կենցաղային և կոմպրեսորների հովացման համակարգի նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ 50խմ տարողությամբ: Ջրամատակարարումը կիրականացվի Նուբարաշենի 2/4 տարածքով անցնող d=600մմ ջրագծից, իսկ կոյուղագիծը Խաղաղ-Դոնի փողոցով անցնող d=500մմ կոյուղագծին՝ d=150մմ միացումով:, Հեղեղատարը կմիացվի Խաղաղ-Դոնի փողոցով անցնող d=700մմ հեղեղատարին:

ԱԳԼՃ կայանի էլեկտրամատակարարումը 120կվտ հզորությամբ կիրականացվի ՀԷՑ ցանցից պայմանագրային հիմունքներով:

Ըստ տեխնոլոգիական գործընթացի մթնոլորտ է արտանետվում բնական գազ, որի հիմնական բաղադրիչն է մեթանը (95.01%) և աննշան քանակներով հոտավորող նյութ՝ էթիլմերկապտան:

Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 10խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 100քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա 328 խմ ծավալով հողի բերրի շերտը պահպանվելու է ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգով:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- հողի բերրի շերտը հանվելու և պահվելու է ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը և որակական հատկանիշների վատթարացումը,
- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ - ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ - ՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՍՏՈՒԳԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԻԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում ապահովվելու է սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:

ԱԳԼՃ կայանի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1200000 դրամ:

Պատճառաբանական մաս. Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են տարածքային կառավարման, ենթակառուցվածքների, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, քաղաքաշինության ու անշարժ գույքի կադաստրի կոմիտեները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Գնահատման հայտի լրամշակման ընթացքում հաշվի են առնվել ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց անհնարինության դեպքում նախատեսել

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀՇՆ IV-11.05.02-99 շիննորմերի և 2005 թ. դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N2399-Ն և 2008թ. օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն ՀՀ կառավարության որոշումներով և 2014թ. հոկտեմբերի 14-ի, «Քաղաքաշինություն, Քաղաքների և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հոդվածով հաստատված ՀՀ քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանով և ապահովել «Հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում սանհանգույցներին առաջադրված պահանջները և շինարարական նորմերը» և դրանց հիման վրա հայտով նախատեսված լուծումները:

3. Շահագործման փուլում սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել բազմավառելիքային կայանի սահմանային թույլատրելի արտանետումների նախագիծը և ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմերը:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Տիգրան Հակոբյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի 2/4 հասցեում նախատեսվող ավտոգազալցակայան կառուցելու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS